

**ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՄԵՌԱԿԱՆ ՈՏՆՁԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Շրջանը հանձնառու է ապահովել սեռական ոստանկություններից զերծ աշխատանքային և ուսումնական միջավայր: Շրջանն արգելում է սեռական ոստանկություններն աշխատակիցների, աշակերտների կամ Շրջանի հետ կամ Շրջանի համար գործարարությամբ զբաղվող անձանց նկատմամբ և նրանց կողմից ըստ իրական կամ ընկալված սեռականության, սեռական կողմնորոշման, սեռի, սեռի ինքնության, սեռի արտահայտման, հղիության, ծննդաբերության, կրծքով կերակրման/լակտացիայի կարգավիճակի և ցանկացած այլ առնչվող բժշկական վիճակի հիման վրա: Այս քաղաքականությանը չհետևելը նահանգի և դաշնային օրենքի խախտում է:

Կալիֆոռնիայի օրենսդրության համաձայն սեռական ոստանկությունները սահմանվում են որպես անցանկալի սեռական բնույթի գործողություններ, ներառյալ սեռական կապի և ծառայությունների խնդրանքներ, և սեռական բնույթի այլ խոսքային, տեսողական կամ ֆիզիկական պահվածք աշխատանքային կամ կրթական միջավայրում գտնվող անձի կողմից՝ հետևյալ պայմաններից որևէ մեկի առկայությամբ.

- Կարբազդի դրսևորումն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կատարվում է որպես անհատի աշխատանքի, գիտական կարգավիճակի կամ առաջընթացի պայման:
- Անհատի վարքագծի դրսևորումը կամ մերժումը օգտագործվում է որպես աշխատանքային կամ գիտական որոշումների հիմք, կամ ցանկացած որոշման համար, որը կարող է ազդել անհատի վրա՝ կապված ուսումնական հաստատությունում կամ դրա միջոցով հասանելի նպաստների և ծառայությունների, պարգևների, ծրագրերի կամ գործունեության հետ:
- Կարբազդի ունի բացասական ազդեցություն գործելու նպատակ կամ ազդեցություն անձի աշխատանքի կամ գիտական գործունեության վրա, կամ՝ անհաբեկման, թշնամական կամ վիրավորական աշխատանքային կամ կրթական միջավայր ստեղծելու նպատակով:

1972 թ. Կրթական փոփոխությունների IX Բաժնի համաձայն սեռական բնույթի պահվածքը, որը բավարարում է հետևյալ պայմաններից որևէ մեկը կամ մի քանիսը, կարող է հանդիսանալ սեռական ոստանկություն.

- Շրջանի օգնություն, արտոնություններ կամ ծառայություններ տրամադրելու համար աշխատողը պահանջում է, որ անձը ցուցաբերի անցանկալի սեռական պահվածք,
- Ոչ ցանկալի վարքագիծ, որը որոշվում է ողջամիտ անձի կողմից՝ այնքան խիստ կամ ներխուժող լինելու համար, եւ սուբյեկտիվ եւ օբյեկտիվորեն վիրավորական է, որ այն սահմանափակում կամ մերժում է անձին հավասար մուտք գործել Շրջանի կրթական ծրագրին կամ գործունեությանը,
- Սեռական ոստանկություն, բռնություն ժամադրության ժամանակ, ընտանեկան բռնություն կամ հետապնդում, ինչպես սահմանված է Քլերի օրենքում կամ Կանանց նկատմամբ բռնության մասին օրենքում:

Վերոհիշյալ խտրականության, ոստանկությունների, անհաբեկման, վիրավորական վարքագծի կամ ծաղրանքի ակնհայտ լինելու դեպքում անձնակազմը պարտավոր է անհապաղ քայլեր ձեռնարկել միջամտելու համար, եթե դա անվտանգ է: Նման պահվածքի մասին ղեկավարին կամ Բաժնի IX/անհաբեկման բողոքների հարցերով կառավարչին հայտնելը կարող է հանդիսանալ պատշաճ միջամտություն: Դպրոցի/վարչակազմի կողմից խտրականության, ոստանկության, անհաբեկման, վիրավորական վարքագծի կամ ծաղրանքի մասին ծանուցում ստանալուց և բողոք ընդունելուց հետո, անկախ այն բանից՝ դա կատարել է աշխատողը, աշակերտը, թե երրորդ կողմը, դպրոցը կամ բաժինը պետք է անհապաղ ձեռնարկի պատշաճ քայլեր՝ քննելու, քննությանը օգնելու կամ այլ կերպ պարզելու, թե ինչ է տեղի ունեցել: Դպրոցի անձնակազմը պետք է ձեռնարկի արագ և արդյունավետ համապատասխան քայլեր՝ վերջ դնելու նման պահվածքին, վերացնելու թշնամական միջավայրը, եթե այն ստեղծվել է, և կանխել դրա կրկնությունը: Նշված քայլերը պետք է ձեռնարկվեն անկախ այն բանից՝ անհատը բողոք է ներկայացրել, թե դիմել է դպրոցին/վարչակազմին միջոցներ ձեռնարկելու համար: Այս քաղաքականությունը վերաբերվում է Լոս Անջելեսի միացյալ դպրոցական շրջանի վերակացուի իրավասության տակ գտնվող դպրոցների ցանկացած գործունեությանը:

Շրջանի ցանկացած աշակերտ կամ աշխատակից, ով հավատում է, որ սեռական ոստանկությունների գոհ է դարձել կամ, ովքեր ակնհայտ են եղել նման արարքի, պետք է այդ մասին զեկուցեն ադմինիստրատորին կամ Խորագիր IX / Բռնությունների (բուլիինգի) դեմ բողոքների մենեջերին, որպեսզի համապատասխան միջոցներ ձեռնարկվեն՝ այն լուծելու համար: Շրջանն արգելում է վրեժխնդրությունն ընդդեմ այն անձի, ով սեռական ոստանկությունների մասին բողոք է ներկայացնում կամ մասնակցում է հետաքննության գործընթացին: Բողոքները պետք է անհապաղ և արդար կերպով ուսումնասիրվեն այնպես, որ հնարավորինս լիարժեք ձևով պահպանվի շահագրգիռ կողմերի գաղտնիությունը:

Ձեր դպրոցի/գրասենյակի ադմինիստրատորը կամ Խորագիր IX / Բռնությունների (բուլիինգի) դեմ բողոքների մենեջեր(ներ)ը. _____; Հեռ. _____ էլ. փոստ _____.

Աշակերտների կամ նրանց կողմից սեռական ոստանկությունների հետ կապված քաղաքականության/ընթացակարգերի, ինչպես նաև՝ բողոք ներկայացնելու ձևի համար դիմե՛ք Աշակերտների քաղաքացիական իրավունքների գրասենյակ, Բին Նգուենին՝ LAUSD-ի Բաժնի 504/Խորագիր IX համակարգողին, հեռ.՝ (213) 241-7682:

Աշխատակցի կողմից աշխատակցի հանդեպ, աշակերտի կողմից աշխատակցի հանդեպ կամ աշխատանքի կամ զբաղվածության հետ կապված խտրականությունների, ոստանկությունների, անհաբեկմանների կամ չարաշահման վարքագծերի դեպքում դիմե՛ք Հավասար հնարավորությունների Բաժնի (213) 241-7685 հեռախոսահամարով:

Շրջանի գրասենյակների հասցեն է՝ Լոս Անջելեսի Միացյալ Դպրոցական Շրջան՝ 333 South Beaudry Avenue, Los Angeles, CA 90017:

**ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ՄԵՌԱԿԱՆ ՈՏՆՁԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

Ձեր դպրոցն աշխատում է Ձեզ համար ապահովել անվտանգ և սեռական ոտնձգություններից զերծ կրթություն: Սեռական ոտնձգությունն այն պահվածքն է, որը Ձեզ դուր չի գալիս, որն ուղղված է Ձեզ, քանի որ Դուք աղջիկ եք կամ տղա: Այն կարող է պատճառել անապահով լինելու կամ վախի զգացողություն և խանգարել Ձեր ուսմանը: Դա կարող է լինել ինչ-որ մեկի վատ խոսքերը, ինչ-որ բան, որը տեսնում եք, ֆիզիկական վարք կամ անձնական մարմնի մասեր շոշափելը (օրինակ՝ լողազգեստով ծածկված մասերը): Օրինակները կարող են լինել հետևյալը.

- Անցանկալի գրկախառնությունները, համբույրները, մարմնի մասերին դիպչելը կամ բռնելը
- Շատ մոտ կանգնելը կամ ինչ-որ մեկին չթողնել շարժվելը
- Սեռական բնույթի անպատշաճ կամ տհաճ նկարներ ցույց տալը կամ ուղարկելը, ինչը ստիպում է ուրիշներին վատ կամ անհարմար զգալ
- Ինչ-որ մեկի հետ այլ կերպ վարվելը՝ պարզապես այն պատճառով, որ նա աղջիկ կամ տղա է

Այդպես վարվելը դեմ է դպրոցի կանոններին և օրենքին: Եթե Ձեզ համար անվտանգ է, ապա կարող եք այդ անձին ասել, որ վերջ տա Ձեր կամ այլ երեխաների նկատմամբ նման վատ վարքագիծ դրսևորելը: Դուք կարող եք օգնել Ձեր ընկերներին, որպեսզի նրանք կիսվեն նմանատիպ խնդիրներով՝ որևէ չափահասի հետ, ում նրանք վստահում են: Դուք կարող եք զեկուցել այդ մասին տնօրենին, ուսուցչին, կամ մեկին, ով զբաղվում է նման բողոքներով: Դպրոցը անմիջապես գործողություններ կձեռնարկի՝ պարզելու, թե ինչ է տեղի ունեցել, դրան վերջ տալու և կանխելու կրկին տեղի ունենալը: Ոչ ոք իրավունք չունի պատժել Ձեզ՝ զեկուցելու կամ կատարվածի մասին չափահաս անձի հետ խոսելու համար: Դպրոցը տեղեկատվություն կտրամադրի այն անձանց, ովքեր կարող են օգնել՝ շտկելու իրավիճակը: Մա ճիշտ է Ձեր դպրոցական շրջանի դպրոցական ողջ գործունեության համար:

Մարդիկ, ովքեր կարող են օգնել Ձեզ՝

Ձեր տնօրենը՝ _____
Բողոքարկման մենեջերը (Խորագիր IX/Բուլիինգ)՝ _____
Զանգահարել՝ _____
Էլ. փոստ՝ _____

Լրացուցիչ տեղեկությունների և զեկուցելու ձևի համար կարող եք զանգահարել կամ գրել Աշակերտների քաղաքացիական իրավունքների գրասենյակ Բին Նգուենին՝ ԼԱՄԴՇի Մաս 504/Բաժին IX համակարգողին. հեռ. (213) 241-7682, էլ. փոստ՝ EquityCompliance@lausd.net:

Դպրոցները կարող են օգնություն հայցել անձնակազմի համար՝ զանգահարելով կամ գրելով «Հավասար հնարավորությունների բաժին»՝ (213) 241-7685 հեռախոսահամարով:

Երկու գրասենյակներն էլ գտնվում են Լոս Անջելեսի Միացյալ Դպրոցական Շրջանի գլխավոր մասնաշենքում, և հասցեն հետևյալն է՝ 333 South Beaudry Avenue, Los Angeles, CA 90017: